Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ք.Երևան

16.06.2022թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝
նախագահությամբ՝ Ա. Մարգարյանի
մասնակցությամբ անդամներ՝
Ա. Մելիքսեթյանի
Հ. Մանուկյանի

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) քննության առնելով քրեական մասնագիտացման դատավորների ցուցակի արտահերթ համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Տ

Բողոքարկվել է տարբերակ 10-ի նյութական իրավունքի բաժնի 3"35-րդ, 15"10-րդ, 24"55-րդ, 30"41-րդ, 25"17-րդ, 34"61-րդ, 14"46-րդ , 16"42-րդ, 35"31-րդ հարցերը:

35-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի կողմից ներկայացված հիմնավորումները խնդրում առկա պայմանների անբավարարության պարագայում ողջամիտ են և ընդունելի հանձնաժողովի համար, հետևաբար տրվում է 1 միավոր:*

10-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի հիմնավորումները կրկնում են ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներում արտահայտված դիրքորոշումները, մյուս կողմից խնդրի պայմանների ոչ հստակությունը թույլ չի տալիս գալ միանշանակ եզրահանգման, ուստի նշվածը մեկնաբանելով հօգուտ հավակնորդի , տրվում է 1 միավոր:*

55-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի հիմնավորումներն առ այն, որ առկա է չհաջողված հանցակցության երկու տեսակ, ընդունելի է: Հետևաբար, հաշվի առնելով, որ մեջբերված իրավադրույթների և եզրահանգումների համատեքստում ընտրված տարբերակը ճիշտ է, ուստի տրվում է 1 միավոր:*

41-րդ հարցի *վերաբերյալ հավակնորդի փաստարկումը չի բխում քրեական օրենքի տրամաբանությունից, քանզի հափշտակության կատարումն այլ անձի ներկայությամբ /բացառությամբ հանցակիցների/ այն պայմաններում, երբ հանցավորը գիտակցել է, որ այդ*

անձը ընկալում է իր կողմից կատարվող արարքի բնույթը, չի կարող գնահատվել գաղտնիության պայմաններում կատարված, ընդ որում որևէ նշանակություն չունի այդ անձը սեփականատերն է, թե՝ մեկ ուրիշը, հետևաբար հավակնորդի հիմնավորումը ընդունելի չէ, ուստի գնահատականը չի բարձրացվում:

17-րդ հարցի վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները չեն բխում քրեական օրենսդրության դրույթների ճիշտ մեկնաբանությունից, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանի վերաբերելի նախադեպային որոշումներից: Իսկ ինչ վերաբերում է այն փաստարկին, որ բոլոր տարբերակները վիճահարույց են, ապա հավակնորդը իր գնահատմամբ սխալ պատասխանների պարագայն չի ընտել ճիշտ պատասխանին առավել մոտը, ուստի գնահատականը չի բարձրացվում:

61-րդ հարցի վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ընդունելի չեն, քանզի սխալ են մեկնաբանվել տարածության մեջ քրեական օրենքի գործողության դրույթները, արդարացված չէ նաև ՄԻԵԿ-ի վերաբերյալ հղում կատարելը, քանզի այն չի արտացոլում ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ մասում ներկայացված պահանջը, ուստի գնահատականը չի բարձրացվում:

46-րդ հարցի վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները չեն բխում խնդրում առկա հանգամանքներից, քանզի հագամանքները բավարար են հստակ եզրահանգման գալու համար, ուստի գնահատականը չի բարձրացվում:

42-րդ հարցի վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները ՀՀ քրեական օրենսդրության նորմերի սխալ մեկնաբանության արդյունք են, քանզի ծանր վնաս պատճառելը ավազարկության առանձնապես ծանրացնող հանգամանք է, իսկ քրեաիրավական նորմերի մրցակցության կանոններից ելնելով ծանրացնող /զենքի գործադրմամբ/ և առանձնապես ծանրացնող հանգամանքների մրցակցության պայմաններում արարքը չէր կարող որակվել ծանրացվող հանգամանքով, ուստի գնահատականը չի բարձրացվում:

31-րդ հարցի վերաբերյալ հավակնորդի ընտրված պատասխանի վերաբերյալ ներկայացված հիմնավորումները չեն բխում խնդրում առկա փաստերից: Միևնույն ժամանակ հավակնորդը Գ-ի և Դ-ի արարքները չի քննարկել կաշառք ստանալու և տալու համատեքստում, այն պայմաններում, երբ կաշառքի առարկա կարող են լինել նաև ոչ նյութական առավելությունը, այդ թվում՝ սեքսուալ բնույթի ծառայությունները, ուստի գնահատականը չի բարձրացվում:

Ելնելով վերոգրյալից՝ հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ ***2367*** ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը բավարարել մասնակիորեն, նյութական իրավունքից ստացված 22 միավորը բարձրացնել 3 միավորով՝ արդյունքում արձանագրել 25 միավոր:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Ա.ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

Հ.ՄԱՆՈՒԿՅԱՆ